ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 262 Ա

ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ԱԲՐԱՀԱՄ ՋԱՆՇԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՍԻԼՎԱ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աբրահամ Ջանշիկ Հարությունյանի (ընտանիքի գլխավորը) և Սիլվա Ալբերտի Խաչատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0045-0005, մակերեսը՝ 0.115 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 13-րդ փողոց, թիվ 20 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աբրահամ Ջանշիկ Հարությունյանի (ընտանիքի գլխավորը) և Սիլվա Ալբերտի Խաչատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0052-0016, մակերեսը՝ 0.093 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 6-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 2/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս